# Արջի մորթին բաժանելն այնքան էլ հեշտ չէ

Այն մտավախությունը, թե Անկախ Պետությունների Համագործակցության կամ Ընկերակցության ստեղծումը հեշտ գործընթաց չի լինելու՝ մասամբ հաստատվեց արդեն 11 ինքնիշխան պետությունների ղեկավարների դեկտեմբերի 30-ի մինսկյան հանդիպման ժամանակ: Հենց միայն քննարկվելիք հարցերի օրակարգի հաստատումը, ըստ լրատվական գործակալությունների ժլատ հաղորդումների, տևել է մեկ ժամ 15 րոպե՝ նախատեսվածից զգալիորեն շատ: Առաջարկված 13 հարցերից, ի վերջո, քննարկման են ընդունվել 10-ը. 1. Համագործակցության կոորդինացնող մարմինների, 2. անցման շրջանում պաշտպանական հարցերի, 3. Համագործակցության հեռուստառադիոկամպանիայի և տպագիր օրգանի, 4. արտակարգ բնապահպանական իրավիճակների, 5. արտասահմանյան պետությունների տրամադրած վարկերի հաշվին գնված մթերքները 1992 թվ. բաշխելու, 6. դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների համաձայնեցված օգտագործման ժամանակավոր միջոցառումների, 7. Համագործակցության անդամների միջև քաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համաձայնությունների կնքման և գործադրման կարգի, 8. մշակութային բնագավառում համագործակցության, 9. տիեզերքում համագործակցության մասին, և վերջինը՝ 10-րդը՝ զանազան հարցեր:

Իհարկե, սրանք բոլորն էլ կարևոր և լուրջ քննարկման արժանի հարցեր են: Սակայն այնպիսի կարևորագույն մի հարց, ինչպիսին Համագործակցության ողջ տարածքն ընդգրկող ազգամիջյան կոնֆլիկտներն են, ավաղ, այս ցուցակում տեղ չի գտել: Այս հարցում Համագործակցության լիդերները, երևում է, լիովին ժառանգել են նախկին Խորհրդային Միության նախկին ղեկավարության անբարոյական վարքագիծը: Մասնավորապես, նիստում մերժվել է Հայաստանի ղեկավարության կողմից բարձրացված՝ ԼՂՀ-ի խնդրին անդրադառնալու հարցը: Այդ մասին մեր հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց արդեն դեկտեմբերի 31-ի երեկոյան, հեռուստատեսային կարճառոտ հարցազրույցում, ուր, չթաքցնելով հիասթափությունը, նշեց, որ Ադրբեջանը վիժեցրեց այդ հարցի քննարկումը և համապատասխան հայտարարության ընդունումը, որի տեքստն արդեն մշակված էր: Լ. Տեր-Պետրոսյանը խոստացավ այդ տեքստը ներկայացնել միջազգային հանրությանը: Այժմ, երբ ես գրում եմ այս տողերը, այն դեռ ինձ հայտնի չէ: Հայտնի է մի բան՝ հարցի քննարկումը, Ադրբեջանի առաջարկությամբ հետաձգվել է: Ինչո՞ւ, որքա՞ն ժամանակով: Ո՞վ գիտե: Գուցե թե այնքան ժամանակով, մինչև որ Ադրբեջանը իր հաշվով թուրքավարի «լուծի՞» Արցախի հարցը՝ իրականացնելով այն հինավուրց հայկական հողի վերջնական հայաթափումը: Ամեն դեպքում, Արցախում այսօր շարունակվող վայրագությունների ուղղակի ատատասխանատվությունն այսուհետ ընկնում է նաև Համագործակցության անդամ մյուս բոլոր տասպետությունների ղեկավարների վրա, որոնք հանցագործ անտարբերություն հանդես բերեցին բնաջնջման ուղղակի և միանգամայն իրական սպառնալիքի առաջ հայտնված արցախահայության հանդեպ՝ մերժելով գոնե քննարկել ԼՂՀ-ն իբրև ԱՊՀ-ի անդամ ընդունելու խնդրանքը:

Հայտնի է, որ Ռուսաստանի նախագահ Բ. Ելցինը դեռ մինչև Մինսկի տարեվերջյան ժողովը հանդես էր գալիս համագործակցության միացյալ զինված ուժերի պահպանության օգտին: Սրա դեմ ըմբոստացել են Ադրբեջանը, Մոլդովան և Ուկրաինան, որոնք ամենայն վճռականությամբ ձգտում են ունենալ սեփական բանակներ: Առաջին երկուսի հարցը պարզ է. նրանք ուզում են որքան կարելի է շուտ տեր դառնալ իրենց տարածքներում գտնվող զենք ու զորքին՝ շուտափույթ կերպով և բռնի ուժով «անհնազանդ» Արցախն ու Պրիդնեստրովյեն խեղդելու համար: Ադրբեջանը, ամեն ինչից զատ, հավակնում է տեր դառնալ նաև Կասպիական նավատորմին, ինչը զգալիորեն կմեծացնի նրա կշիռը Մերձկասպյան երկրների հետ ապագա հարաբերություններում:

Դե, իսկ Ուկրաինա՞ն: Նրա ինչի՞ն է պետք 470 հազարանոց բանակը, գումարած Սևծովյան ռազմական նավատորմը, որին դեմ չէ նույնիսկ ամբողջովին տիրելու, առանց որևէ մեկի հետ կիսելու:

Ռուսական քաղաքական մեկնաբաններից ոմանք առաջ են քաշում այն վարկածը, թե Ուկրաինան այդքան մեծ հավակնություններ է ներկայացնում խորհրդային զենքի նկատմամբ՝ առաջիկայում այն շահավետ վերավաճառելու համար:

Սակայն չի բացառվում նաև երկրորդ վարկածը. ինձ թվում է, որ Ուկրաինան արդեն այսօրվանից ամենալուրջ կերպով պատրաստվում է զենքի ուժով պաշտպանել իր տարածքային ամբողջականությունը հնարավոր ոտնձգություններից:

Այսպես, թե այնպես, զանազան տարաձայնությունների պատճառով հնարավոր չի եղել հանգելու բոլորին բավարարող որոշման: Պայմանավորվածություն է ձեռք բերվել միայն անցման շրջանում, այսինքն՝ առաջիկա երկու ամսում, պահպանել Զինված Ուժերի միասնական հրամանատարությունը՝ Եվգենի Շապոշնիկովի ղեկավարությամբ:

Դեկտեմբերի 30-ի Մինսկյան հանդիպման բոլոր մասնակիցները դեռ հայտնի չեն, իսկ արդեն եղած ինֆորմացիան առանձնակի լավատեսության հիմքեր դեռևս չի տալիս: Այդ հանդիպումը, ամենայն հավանականությամբ, շատ ավելի դժվարին է եղել, քան սպասում էին նրա մասնակիցները: Համենայն դեպս, բոլոր 10 հարցերի համար վաղօրոք նախատեսված երկու ժամը բավարարել է միայն... առաջին հարցի քննարկմանը: Ինչպես երևում է՝ Խորհրդային Միության բարեբախտաբար խաղաղ կազմալուծումից հետո լուրջ տարաձայնություններ են առաջանում սպանված արջի մորթին բաժանելու գործում: Գլուխ է բարձրացնում համագործակցության առանձին անդամների էգոիզմը: Ռուսաստանը, վերջապես ազատվելով «ավագ եղբոր» հոգեմաշ պարտականությունից, որը նրան, ինչ էլ լինի, որոշակի չափով կաշկանդում էր, հիմա արդեն ձգտում է թելադրողի դեր ստանձնել, մյուսները ակտիվորեն հակադրվում են դրան: Այդ երևում է թեկուզև այս հունվարի 2-ից Ռուսաստանում գների արձակման քաղաքականությանն անցնելուց, ինչը հավանության չէր արժանանում մի շարք պետությունների կողմից, բայց Բորիս Ելցինն, այնուամենայնիվ, գնաց դրան՝ փաստորեն հարկադրելով նաև մյուսներին, այդ թվում և՝ Հայաստանին, հետևելու իր օրինակին...

Եթե չհաջողվի հաղթահարել այս էգոիզմը, արջի մորթուց որքան կարելի է շատ բաժին փախցնելու այս ակնհայտ մոլուցքը, ապա, կարծում եմ, Համագործակցության ստեղծումը հենց ամենասկզբից կենթարկվի չափազանց մեծ փորձությունների և, աստված մի արասցե, կարող է չդիմանալ դրանց:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ